ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմ

«Լոռու տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ

ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

«14» հունիսի, 2023թ.

ՎԱՆԱՁՈՐ, ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմը, ի դեմս մարզպետ **Արամ Խաչատրյանի** (այսուհետ՝ մարզպետի աշխատակազմ), մի կողմից, և **«Լոռու տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» հասարակական կազմակերպությունը**(այսուհետ՝ Լոռու ՏԶԿԳ) , ի դեմս նախագահ **Արփինե Հակոբյանի**, ստորագրեցին փոխգործակցության սույն հուշագիրը առ այն, որ.

1. ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

ա) Մարզպետի աշխատակազմը և Լոռու ՏԶԿԳ-ն, նկատի ունենալով Լոռու մարզի զբոսաշրջության ոլորտի զարգացման համատեղ ջանքերն ու կարևորությունը, արտահայտում են միմյանց հետ համագործակցելու պատրաստակամությունը և ձգտումները՝

- Լոռու մարզի զբոսաշրջային առաջարկի ուժեղացման,
- Լոռու մարզի առաջխաղացման, գրավչության բարձացման և ներկայացվածության մեծացման,
- Շահակից կողմերի և ոլորտի դերակատարների միջև երկխոսության ապահովման նպատակով:

բ) Կողմերը պայմանավորվում են համագործակցել սույն հուշագրով սահմանված պահանջներին համապատասխան, Կողմերի համար ընդունելի ձևաչափով՝ հուշագրում նշված նպատակների իրականացման համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կողմերը պարտավորվում են ձեռնարկել բոլոր միջոցները սույն հուշագրով ստանձնած իրենց պարտականությունները բարեխղճորեն, Կողմերի միջև համաձայնեցված ժամկետներում կատարելու համար:

Սույն հուշագիրը Կողմերից ոչ մեկի համար ֆինանսական պարտավորություններ չի առաջացնում:

3. ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1. Սույն հուշագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման օրվանից և գործում է *մինչև 2024 թ. դեկտեմբերի 31-ը*:
2. Հուշագրի ժամկետը կարող է երկարացվել կողմերի համաձայնությամբ:
3. Սույն հուշագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ ենթադրվող դադարեցման օրվանից ոչ ուշ, քան 1 (մեկ) ամիս առաջ մյուս Կողմին գրավոր ծանուցմամբ:

4. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն հուշագրով նախատեսված պարտականություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե

դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է հուշագիրը կնքելուց հետո և Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն հուշագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել սույն հուշագիրը՝ այդ մասին նախապես տեղեկացնելով մյուս Կողմին:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

Սույն հուշագրի կատարման ընթացքում առաջացած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն հուշագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ և համարվում են դրա անբաժանելի մասը:
2. Հուշագիրը համարվում է կնքված՝ լիազորված մարմնի ղեկավարի կողմից այն ստորագրելուց և հրապարակելուց հետո:
3. Սույն հուշագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 2 (երկու) բնօրինակներից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

7. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմ ՀՀ, Լոռու մարզ, Վանաձոր, Հայքի հրապարակ **Արամ Խաչատրյան՝** _____	«Լոռու տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ ՀՀ, Լոռու մարզ, Թումանյան, Դսեղ, 14/8 **Արփինե Հակոբյան՝** _____